

ԴՐ. ԶԱՆՁԵՍՆԻ 25 ԱՄԵՍԿԻ

1899 թ. նոյեմբերի 20 ին, Մոսկուայում տօնուեցաւ և մի ուրիշ լոքելեան—դա պ. Գրիգոր Զանշեանի քսանեհինգամեակն էր:

Պ. Զանշեանը թէև հալերէն լեզուով գրեթէ ոչինչ աշխատութիւն չէ տուել մեզ, սակայն ուսւս հասարակութեան մէջ նա յայտնի է որպէս մի ընտիր և եռանգոտ հրապարակախօս. նորա «Թոքի առևտիքի քաղաքացիութեան» 7-ր թէ 8-ր տպագրութեան է արժանացել կարճ ժամանակուալ ընթացքում: Բայց մանաւանդ նա յայտնի է իւր «Երացայ ուսուցիչ» նշանաւոր ժողովածուի հրատարակութեամբ, որ երկու-երեք տարուայ ընթացքում արդէն երրորդ անգամն է տպագրուում և որի արդիւնքով քաւական թուով հայ որբանոցներ են բացուած Տաճկա-Հայաստանում:

Խմբագրութիւնս պարտք համարեց շնորհաւորել ազնիւ գործչի լոքելեանը հետևեալ հեռագրով.

Մոսկուա, իրաւաբան Մամիկոնեանին.

Ողջունում ենք ազնիւ գիտնական Գրիգոր Զանշեանի քսանեհինգամեալ փառաւոր ծառալութիւնը գիտութեան:

† Ա. ԳՈՒԼԱՄԻՐԵՍՆՑ

Ընդամենը մի երկու վեցամսեալ հանդէսներ ունէինք հալերէն լեզուով և նոցանից մէկն էլ դադարեց այս օրերս նորա հրատարակչի մահուան պատճառով:

«Արագս» գեղարուեստական հանդիսի հրատարակիչ Սիմէոն Գուլամիրեանցը կարճատև հիւանդութիւնից յետու, իւր հալըենի Երևան քաղաքում, կնքեց իւր երկրաւորը և հայ ընթերցող ժողովուրդը զրկուեցաւ իւր

միակ գեղեցիկ պատկերազարդ հրատարակութիւնից, որ գոնէ ժամանակի ընթացքում մի շարք գրքերով բաւականութիւն է տուել ժողովրդի գեղարուեստական ճաշակին:

Հանգուցեալը հազիւ միջնակարգ կրթութիւն ունէր. բայց իւր անխոնջ աշխատասիրութեան չնորհիւ կարողացաւ ստեղծել մի զուտ գեղարուեստական հանդէս, որ շարունակեց մինչև իւր մահը, թէպէտ շատ անկանոն կերպով, ալնպէս որ տարեկան երկու գրքե փոխարէն հազիւ մէկն էր լոլս հանում:

Ցանկալի է, որ նորա հրատարակութիւնը անցնէր մի հմուտ անձնաւորութեան ձեռքը:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

— Մեր աշխատակից պ. Ե. Շահազիզը նախինանից գրում է մեզ.—«Նտապում եմ աւետել ձեզ շատ ախորժելի լուր. Նալրանդեանցի գրուածներից մէկը, որ մինչև ցալսօր կորած էր համարւում, գտնուած է, և դորա մի օրինակը այժմ գտնվում է մեր ձեռքին: Այդ «Աղցմիքան է գրաբառ բանաստեղծութիւններից և մի մեծ քերթուածից—«Արկածք նախահօրն»: Սոքա բոլորը ևս գրուած են ընտիր գրաբառով և բանաստեղծութեան ճշմարիտ հոգւով և քանքարով: Մարդ չէ կշտանում կարգալով, ալնքան գեղեցիկ է, նուրբ և թարմ: Կարծես «Դրախտ կորուսեալ» քերթուածի մի հրաշալի կտորը լինի: Կարծում եմ, որ դա մի մեծ գիւտ է մեր գրականութեան համար, և եթէ ինչպէս հարկն է հրատարակուէր, մեծ «Փուրօր» կանէր: Կսպասենք որ պ. Շահազիզը իրեն լատուկ եռանդով շուտով հասարակաց սեղանի վերալ դնէ այդ թանկագին աւանդը:

— Դեր. Մակար եպիսկոպոս Բարխուտարեանցը
լուսաւ ս.